Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 786-Ա որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 945-Ա որոշման

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխվարչապետի օգնականը՝

1) կազմում է իր ընթացիկ աշխատանքային ծրագիրը և ներկայացնում փոխվարչապետին.

2) փոխվարչապետի հանձնարարությամբ՝ իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության, կրթության, գիտության, հանրային ծառայության և ընդերքօգտագործման ոլորտների վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում ներկայացնում ոլորտային օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ, զեկույցներ, իրավավերլուծական-խորհրդատվական նյութեր, վիճակագրական տվյալներ.

3) ուսումնասիրում է փոխվարչապետի կողմից իրեն հանձնարարված ոլորտների զարգացման միտումները, վերհանում առկա հիմնախնդիրները և առաջարկություններ է ներկայացնում փոխվարչապետին դրանց լուծման ուղղությամբ, ամփոփում և ներկայացնում է այդ ոլորտներում ձևավորված միջազգային փորձը.

4) վերլուծում է փոխվարչապետի կողմից իրեն մակագրված փոստը և ամփոփ տեղեկատվություն ներկայացնում փոխվարչապետին.

5) փոխվարչապետի հանձնարարությամբ՝ մշակում է իրավական ակտերի նախագծեր, ուսումնասիրում նախարարական կոմիտեների նիստերի, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի օրակարգում ընդգրկված իրավական ակտերի նախագծերը, նախագծերի վերաբերյալ ներկայացնում կարծիք.

6) նախապատրաստում է պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների հետ փոխվարչապետի հանդիպման համար անհրաժեշտ տեղեկատվական, իրավավերլուծական նյութեր, մասնակցում է փոխվարչապետի առանձին ելույթների, ուղերձների նախագծերի, ինչպես նաև փոխվարչապետի կողմից կազմվող այլ փաստաթղթերի կազմման աշխատանքներին.

7) փոխվարչապետի հանձնարարությամբ հետևում է փոխվարչապետի առանձին որոշումների և հանձնարարականների կատարման ընթացքին, անհրաժեշտության դեպքում, իրականացնում է ուսումնասիրություններ, խնդիրների բացահայտման դեպքում՝ ներկայացնում առաջարկություններ.

8) կատարում է փոխվարչապետի իրավական բնույթի առանձին հանձնարարականներ։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

02.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ